Ս. Պ. ՍԱՐԳՍՅԱՆ

40-ԱՄՅԱ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ՔԱՋԱՐԱՆԻ ՊՂԻՆՁ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏՈՒՄ

1956 թ. երբ Քաջարանում կազմակերպվեց և ստեղծվեց գիտա-հետազոտական բազան, որի անխոնջ ու նվիրյալ ղեկավարը հանդիսացավ Կոնստանտին Քարամյանը իր խանդավառ գործընկերների հետ մասունք առ մասունք սկսեցին հավաքել երկրաբանական անկրկնելի նմուշներ, որոնք աստիճանաբար հարստացվում էին ընդգրկելով ողջ Զանգեզուրի հանքային շրջանի երևակումները ու հանքավայրերը։

Երկրաբանական ինստիտուտի տնօրեն պ-ն Ռ. Զրբաշյանի, կոմբինատի տնօրեն պ-ն Ռ. Նավասարդյանի և ինստիտուտի աշխատակիցներ՝ Ր. Տայանի, Մ. Հարությունյանի, Ա. Ավագյանի և Ս. Սարգսյանի միացյան ուժերով այդ թանգարանի նմուշները դասակարգվեցին հանքավայր առ հանքավայր, ցուցասրահի պատերը զարդարվեցին մեր անվանի գիտնականների լուսանկարներով, երկրաբանական քարտեզներով, ուրվագծերով և աղյուսակներով։ Թանգարանում ներկայացված են հետևյալ հանքավայրերի նրմուշները. Քաջարան, Դաստակերտ, Ագարակ, Ղափան, Մեղրասար, Մարջան, Տերտերասար, Այգեձոր, Քեֆաշեն, Թեյ-Լիճքվազ և արտերկրյա մոլիբդենային մի շարք հանքավայրեր։ Ցուցասրահում նաև ներկայացված է Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերին հորիզոնների երկրաբանական մակետը։ Այս թանգարանի բացումը տեղի ունեցավ 1995 թ. նոյեմբերի 16-ին և զուգադիպեց Երկրաբանական գիտությունների ինստիտուտի 60-ամյակին։

Ցանկացած այցելու կարող է լրիվ պատկերացում ունենալ դիտելով ցուցադրված նմուշները Զանգեզուրի հանքային շրջանի ցանկացած հանքավայրերի մասին։

Սա իրոք մի նվեր է մեր հայ երկրաբանական հասարակությանը և ինչու միայն հայ, այլ նաև օտարերկրացիների և մեր վաղվա սերնդի համար։

Երկրաբանական գիտությունների
ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ